# ՄԻՆԱՍ ՄԱՆՐԱՆԿԱՐՉԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ԷԴԴԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*XIV դարից ձևավորվող Վասպուրականի մանրանկարչությունը մասնագիտական գրականության մեջ ներկայացված է մի քանի խոշոր դպրոցներով, որոնք առանձնանում են հիմնականում կատարողական-ոճական, որոշ դեպքերում նաև՝ պատկերագրական առանձնահատկություններով։ Խոշոր կենտրոններ էին Արճեշը, Բերկրին, Աղթամարը, Խիզանը, Բաղեշը, Ոստանը։ XIV դարի երկրորդ կեսից աշխուժացան Վանա լճի ավազանի հյուսիսում և արևելքում գտնվող գրչության կենտրոնները, որոնք Սիրարփի Տեր-Ներսեսյանը պայմանականորեն անվանում է «Վանի» դպրոց[1]։ Դպրոցների ոճական բնութագրի համար մեծ էր առանձին անհատականությունների դերը։*

*Վասպուրականի մանրանկարչությունը նոր փուլ թևակոխեց XV դարի կեսին, երբ հանդես եկան մի շարք առաջնակարգ վարպետներ։ Նրանց աշխատանքները ոճական առումով տարբերվում էին նախորդ շրջանի մանրանկարիչների գործերից։ Այժմ իրենց ոճը բնորոշվում էր որոշակի հեռացմամբ նախորդների գծային ոճավորումներից և գույների դեկորատիվ օգտագործումից։ Այդ նոր շրջանի վարպետներից է Մինաս ծաղկողը՝ Վասպուրականի XV դարի արվեստի խոշոր ներկայացուցիչներից մեկը, որի ստեղծագործությունը թույլ է տալիս դասել նրան «պրոֆեսիոնալ» նկարիչների շարքը[2]։*

*Մինասը բազմիցս հիշատակվել է որպես Վասպուրականի մանրանկարչության խոշոր ներկայացուցիչ։ Չնայած դրան, նրա ստեղծագործությունը քիչ է ուսումնասիրված և արժանի է ավելի մեծ ուշադրության։*

*Մինասի մասին տեղեկությունները շատ չեն։ Իր արգասավոր ստեղծագործական կյանքը (ելնելով մեզ հասած թվագրված ձեռագրերից) ընդգրկում է 1432—1483 թթ.։ Հայտնի է, որ նա եղել է Մեծոփավանքի գրչության դպրոցի սանը[3]։ Մեծոփավանքը Վասպուրականի մշակութային խոշոր կենտրոն էր, որի դերը հատկապես նշանակալի դարձավ XV դարի սկզբին, Թովմա Մեծոփեցու բաբունապետության օրոք։ Հայտնի պատմիչ, մանկավարժ, մշակութային գործիչ Թովմա Մեծոփեցին, լինելով Մեծոփավանքի առաջնորդ և բաբունապետ, իր ջանքերով ստեղծեց այստեղ գրչության խոշոր կենտրոն, ուր ուսուցանվում էր գրչության արվեստը, գիտություններ, ստեղծվում էին դասագրքեր, արվում էին մեկնություններ և, վերջապես, ընդօրինակվում, նկարազարդվում և կազմվում էին բազմաթիվ ձեռագիր մատյաններ[4]։ «...Քանզի յայսմ վերջին ժամանակիս սա միայն յայտնեցաւ ճշմարիտ բարոզող ազգիս Հայոց և պարծանք ամենայն վարդապետաց և կրօնաւորաց։ Վասն զի առնէր և ուսուցանէր ամենեցուն զսրբութիւն և զառաքինութիւն, քանզի արեգակն էր բերան սորա և լոյս փայլէր ի պրակաց բանիցն, որ շուրջ էին զնովաւ»,— գրում է Մե-*

---

1 S. Der Nersessian. The Chester Beatty Library. A Catalogue of the Armenian Manuscripts. Dublin. 1958. p. 33.

2 Հ. Հակոբյան. Ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում. Երևան, 1997, էջ 114։

3 Ա. Մաթևոսյան. Մեծոփավանքի գրչության կենտրոնը (ԺԲ—ԺԵ դդ.). Էջմիածին, 1997, էջ 158—161։

4 Ա. Մաթևոսյան. Մեծոփավանքի գրչության կենտրոնը։ Դ. Հովսեփյան. Թովմա Մեծոփեցու կյանքը. Վաղարշապատ, 1914։

ծոփեցու աշակերտ Կարապետ գրիչը[5]։ Մինասի ուսուցիչներն են եղել Թովմա Մեծոփեցին և Մկրտիչ Օրբելյանցը՝ Տեր Հուսկան որդու վանքի առաջնորդը։

Ձեռագրերի հիշատակարաններում Մկրտիչ վարդապետը հիշատակվում է որպես Մինասի ուսուցիչը և հոգևոր հայրը։ Թովմա Մեծոփեցու հետ միասին նա ուսանել է Խառաբասավանքի վարդապետարանում, աշակերտելով Սարդիս Ապրակունեցուն և Վարդան Հոգոցվանեցուն։ Եղել է Թովմա Մեծոփեցու դասընկերը և համախոհը, «հարազատ» և «զսիրելի եղբայրն»[6]։ Երկուսն էլ սովորել են Տաթևի համալսարանում Գրիգոր Տաթևացու մոտ, երկուսն էլ եղել են 1441 թ. Էջմիածնի Ազգային ժողովի մասնակիցների թվում[7]։ 1418—1439 թթ. Մկրտիչ «տիեզերալոյս», «աստուածիմաստ» վարդապետը եղել է Բերկրիի Տեր Հուսկան որդու վանքի վանահայր և առաջնորդը, պատրաստել է գրիչներ, ունեցել է մեծաթիվ աշակերտներ։ Նրա հանձնարարությամբ Տեր Հուսկան որդի անապատում գրվել են բազմաթիվ ձեռագրեր։

Նկարչի ուսուցիչները հաճախ հիշատակվում են իր նկարազարդած ձեռագրերի հիշատակարաններում. «(...) Եւ դարձեալ աղաչեմ յիշել յաղաւթս ձեր զտէր Մինաս քաջ նկարողն, որ յար եւ նման է Բեսսելիելի հոգիընկալ առաջին նկարողին տապանակին, եւ է յաշակերտաց սուրբ վարդապետացն Թումային եւ Մկրտիչ Ալբեկենց վարդապետին եւ է բանիբուն եւ հոգիընկալ որպես զվարդապետքն իւր...»[8]։

Ձեռագրերի հիշատակարաններից հայտնի են նաև Մինասի ծնողների անունները. հայրը՝ Մաղթումն է, մայրը՝ Սրմելիքը։ Մինասի ծնողներին, նաև իր Խութլու-Մելիք անունով քրոջը և իր որդուն՝ Հակոբ Կրոնավորին, հիշատակում է Խաչատուր գրիչը 1456 թ. Ավետարանի հիշատակարանում[9] և 1462 թ. Հայսմավուրքում[10], իսկ գրիչ Գրիգոր Աթաբեկենցը 1466 թ. Ավետարանում[11]։

Արվեստաբանական գրականության մեջ Մինաս ծաղկողը առաջին անգամ հիշատակվում է Ժ. Տիկանենի «Հայկական երեք նկարազարդ ձեռագրեր» հոդվածում[12]։ Այն նվիրված է մասնավոր մի հավաքածուի երեք հայկական ձեռագրերին, որոնցից մեկը 1469 թ. Արճեշում Մինասի նկարազարդած Ավետարանն է[13]։ Հոդվածում խնդրո առարկան միջնադարի արվեստի համընդհանուր խնդիրներն են, ինչպես նաև արևելքի և արևմուտքի արվեստի կապը և փոխազդեցությունը։ Չնայած Մինասի արվեստը առանձին ուսումնասիրության նյութ չի հանդիսանում այսուհանդերձ, այնուամենայնիվ, նկարչի անունը դրվում է գիտական շրջանառության մեջ։

Այնուհետև Ֆ. Մաքլերը իր Հայկական մանրանկարչություն ժողովածուում նկարագրում է Մինասի մեկ այլ ձեռագիր՝ Փարիզի Ազգային գրադարանում գտնվող 1456 թ. Ավետարանը (հմր. 18), հրապարակելով հիշատակարանի հատվածների ֆրանսերեն թարգմանությունը և Տերունական շարքի բոլոր մանրանկարների վերարտադրությունները[14]։

---

5 Տե՛ս Ղ. Փիրղալեմյան. Նոտարք Հայոց. Կ. Պոլիս, 1883, էջ 111—112։

6 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. մաս Ա, կազմող՝ Լ. Խաչիկյան. Երևան, 1955, էջ 134։

7 Մ. Օրմանյան. Ազգապատում. Պեյրութ, 1960, էջ 2106 (1453)։

8 Փարիզի Ազգային գրադարան, հմր. 18, էջ 310ա։

9 Նույն տեղում, էջ 311ա. տե՛ս նաև R. H. Kèvorkian, A. Ter-Stepanian, Manuscrits armeniens de la Bibliotheque Nationale de France. Catalogue. Paris, 1998, p. 26—30:

10 Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատ.), ձեռ. 4883, էջ 613բ։

11 Մատ., ձեռ. 9858, էջ 363բ։

12 J. J. Tikkanen. Tre armeniska miniatyrhandskrifter. Helsingfors, 1899. Ջերմորեն շնորհակալություն եմ հայտնում Լ. Զուգասպյանին այդ աշխատությունը ծանոթանալու հնարավորության համար։

13 Երուսաղեմ, Ս. Հակոբյանց Մատենադարան (այսուհետև՝ Երուսաղեմ), հմր. 3427։

14 F. Macler. Miniatures Armeniennes, Vie du Christ. Peintures ornementales. X au XVIIe siecle, Paris, 1913, էջ 20—21, տախտակ XVI—XIX.

Հարություն Քյուրտյանը, ունենալով հայկական ձեռագրերի անձնական հավաքածու, 1970 թ. «Սիոն» ամսագրում հոդված է նվիրում ձեռագրերից մեկին[15], որը նկարազարդել է Մինասը։ Ավարտելով հոդվածի բուն նյութը, հեղինակը ուշադրության է արժանացնում նաև նկարչին, նրա գործունեությունը, թվարկում է Մինասի իրեն հայտնի կենսագրական տվյալները, նրա ծննդյան թիվը առաջարկելով 1417 թ.։ Այնուհետև հեղինակը բերում է 25 նկարազարդած ձեռագրերի ցանկ, ուր սակայն նկատվում են որոշ անճշտություններ։ Այսպես, փարիզյան ձեռագիրը թվագրված է 1455 թ., իսկ 1469 թթ. (Երուսազեմ 3427) Ավետարանը՝ 1479 թ. և վերադրվում է Երևանի Մատենադարանի հավաքածուին, 1455 թ. Ավետարանի (Երուսաղեմ 3815) համարը 3427 է, 1441 թ. Ավետարանի (Մատ 3892) գրչությունը վերագրվում է Թովմա Մեծոփեցի վարդապետին և, վերջապես, Մինասի գործն է համարվում Բոստոնի հանրային գրադարանում գտնվող ձեռագիրը[16], որը հոդվածի հեղինակի խոսքերով «անտարակույս կերպով ծաղկված է Մինաս ծաղկողե»։

Մինասի ստեղծագործությանը անդրադարձել է նաև Նորայր եպիսկոպոս Պողարյանը (Ն. Ծովական)։ Նախ, նա հոդված է նվիրում 1455 թ. նկարազարդված Ավետարանին[17]։ Այնուհետև, հեղինակը հրապարակում է «Մինաս կրոնավոր նկարող. (1415—1490)» հոդվածը, ուր կենսագրական տեղեկություններ է հաղորդում նկարչի մասին և թվարկում է իրեն հայտնի 29 ձեռագիր[18]։ Որոշ անճշտություններից բացի, ցուցակի մեջ չեն մտել Մինասի ձեռագրերից շատերը։ Հետևելով Հ. Քյուրտյանին, Ն. Պողարյանը իր ցուցակի մեջ ընդգրկել է նաև Բոստոնի հանրային գրադարանի ձեռագիրը, 1464 թ. Ավետարանը[19] թվագրված է 1451 թ., 1441 թ. Ավետարանի[20] գրչությունը վերագրվում է Թովմա Մեծոփեցի վարդապետին։

Այնուհետև Ն. Պողարյանը իրականացնում է «Հայ նկարողներ. ԺԱ—ԺԷ դարեր» ծավալուն աշխատությունը, ուր Մինասին նվիրված հոդվածում ներկայացված են նկարչի ութ առավել հիշարժան ձեռագրեր[21]։

Սիրարփի Տեր Ներսեսյանը 1951 թ. «Սիոն» ամսագրում տպագրում է «Մինաս նկարող և իր ծաղկած նկարները» հոդվածը[22], որի հրապարակման առիթը հանդիսացավ Ն. Պողարյանի վերոհիշյալ հոդվածը (ծան. 17)։ Խոսելով Մինասի ընդհանուր ստեղծագործության մասին, հեղինակը կանգ է առնում իրեն հայտնի 5 ձեռագրերի վրա։ Այդ հոդվածից զատ, հայ արվեստին նվիրված իր մեծածավալ աշխատություններում Ս. Տեր Ներսեսյանը բազմիցս հիշատակում է Մինաս ծաղկողին՝ որպես Վասպուրականի մանրանկարչության «Վանի» դպրոցի արտահայտված ներկայացուցիչ։

Գիտնականի ուշադրությունից չի վրիպել և Բոստոնի հանրային գրադարանի հմր. 1327 ձեռագիրը, որի նկարազարդումը Հ. Քյուրտյանը վերագրում է Մինասին։ Ս. Տեր Ներսեսյանը քննում է այն առանձին հոդվածով, գրված

---

15 Հ. Քյուրտյան. Առաքել Վրդ. Դավրիժեցիի գործածած մեկ հիշատակարանը և հարակից նյութեր.—«Սիոն», 1970, հուլիս—օգոստոս, էջ 313—321։

16 Boston Public Library, 1327.

17 Երուսաղեմ, 3815։ Ն. Պողարյան. Վսեմ Տիար Գալուստ Գյուլբենկյանի թանկագին մեկ նվերը.—«Սիոն», 1950, էջ 234—236։

18 «Սիոն», 1971, հուլիս—օգոստոս, էջ 234—236։

19 Լալայան 216։

20 Մատ, 3892։

21 Այն նախ պարբերաբար տպագրվում է «Սիոն» ամսագրում (Մինասին վերաբերող հատվածը տե՛ս 1987, մայիս—հունիս—հուլիս, էջ 146—147), իսկ այնուհետև լույս է տեսնում առանձին գրքով՝ Երուսաղեմ, 1989 թ.։

22 «Սիոն», 1951, մայիս, էջ 142—146։ Տե՛ս նույն հոդվածը S. Der Nersessian. Le peintre Minas et ses oeuvres.— Etudes byzantines et armeniennes, Louvain. 1973 p. 695—700.

1950 թ., գրեթե Մինասին նվիրված հոդվածի հետ միաժամանակ[23]։ Նշելով պատկերագրական և ոճական մեծ ընդհանրությունը Մինասի արվեստի հետ, Ս. Տեր Ներսեսյանը, այնուամենայնիվ, մանրանկարների հեղինակությունը Մինաս նկարչին չի վերագրում։ Ծանոթ չլինելով բնագրին և մեր տրամադրության տակ ունենալով մանրանկարների միայն սև-սպիտակ լուսանկարները[24], խուսափում ենք որևէ ենթադրությունից։ Հիմք ընդունելով Ս. Տեր Ներսեսյանի կարծիքը, ձեռնպահ ենք մնում այդ ձեռագիրը սույն հոդվածում ներկայացվող Մինասի նկարազարդած ձեռագրերի շարքը դասելուց։

Հարկ է նշել նաև, որ Մինասի նկարազարդումների վերատպությունները տեղ են գտել հայկական մանրանկարչությանը նվիրված, Հայաստանում և արտասահմանում տպագրված ալբոմներում և կատալոգներում, ինչպես նաև հայ արվեստին նվիրված ընդհանուր աշխատություններում[25]։

Մինասի ստեղծագործության մեր ուսումնասիրությունը այսօր թույլ է տալիս լրացնել նրա նկարազարդած ձեռագրերի քանակը, նկարչի գործունեության և նրա աշխատանքների վերաբերյալ որոշ ճշգրտումներ կատարել, և առավել լրիվ պատկերացում կազմել նրա ստեղծագործական սկզբունքների մասին։

Ստորև ներկայացվում է ձեռագրերի համառոտ նկարագրությունը։

1. 1432 թ., Մաշտոց, Արճեշ, գրիչ՝ Կարապետ, ստացող՝ Սկրտիչ Օրբելեանց վարդապետ, Փիրղալեմյան 102[26]։

Այս Մաշտոցը Մինասին վստահված առաջին գործերից մեկն է, երբ նա դեռ երիտասարդ էր, և ընդամենը դպիր։ Սկրտիչ վարդապետը՝ Մինասի ուսուցիչը, ձեռագրի պատվիրատուն է. «Ետու գրել զսա... յիշատակ ինձ, և հոգևոր ծնողաց իմոց՝ Կարապետ կրօնաւորի և Յակոբի, այլ և մարմնաւոր ծնողաց իմոց՝ Օրպէլին և Դովլաթին»[27]։ Իր հիշատակարանում նա հիշում է մյուսների շարքում՝ «...ղերջանիկ և զքաջ հռետորն և զտիեզերալոյս բարունին զԹովմայ, որ զօրինակն շնորհեաց և բազում բարութիւնս եցոյց մեզ (...) նաև զհոգևոր որդեակս իմ զՄինաս դպիրն, որ զգիրս ծաղկեաց...»[28]։ Յավոք, ձեռագիրը մեզ չի հասել։

2. 1433 թ., Ավետարան, Արճեշ, գրիչ՝ Կարապետ, ստացող՝ Հովհաննես Երզնկացի ոսկերիչ, Մատ 5172։ Թերթ՝ 298, թուղթ, չափ՝ 18,5×14, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ)։

Ձեռագիրը պարունակում է 4 ավետարանիչների դիմանկարները, անվանաթերթեր, խորաններ։ Լուսանցազարդերը մեծաթիվ չեն։ Մինասը թողել է իր ստորագրությունը Հովհաննես ավետարանչի դիմանկարի տակ (էջ 228բ)՝ «զՄինաս ծաղկողս և զծնողս իմ յիշեցէք ի Քրիստոս»։

3. 1435 թ., Հովհան Ոսկեբերանի Մեկնութիւն ԺԴ Թղթոցն Պօղոսի, Մեծոփատանը, գրիչներ՝ Հովհաննես Մանկասարենց, Ստեփանոս, ստացող՝

---

26 S. Der Nersessian. An Armenian Gospel of the Fifteenth Century, The Boston Public Library Quarterly, January 1950, Տե՛ս նոյն հոդվածը S. Der Nersessian.—Etudes byzantines et armeniennes, Louvain, 1973, p. 683—694.

24 Մատ, Ս. Տեր Ներսիսյանի արխիվ, 1. 2։

25 Լ. Դուռնովո, Ռ. Դրամբյան. Հայկական մանրանկարչություն. Երևան, 1967, նկ. 70։ Հ. Հ. Հակոբյան. Հայկական մանրանկարչություն. ալբոմ, Երևան, 1978, նկ. 62, 63, 64, O. Avedissian. Peintres et Sculpteurs Armeniens, Le Caire, 1959, էջ 95; M. Thierry, P. Donabedian. Les arts Armeniens, Paris, 1982, նկ. 138, 139; T. F. Mathews, R. Wieck. Treasures in Heaven, Armenian Illuminated Manuscripts, The Pierpont Morgan Library, New York, 1994, էջ 194—195, նկ. 67, տախտակ 32—33, Armenie entre Orient et Occident. Trois mille ans de civilisation. Sous la direction de R. H. Kevorkian. Bibliotheque Nationale de France, Paris, 1996, ծան. 54, 55, նկ. էջ 48, 120։

26 Ղ. Փիրղալեմյան. Նոտարք, էջ 100—101։

27 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա, էջ 424։

28 Նույն տեղում։

Թովմա Մեծոփեցի վարդապետ, Մատ 1380։ Թերթ՝ 347, թուղթ, չափ՝ 22,5×16,5, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ)։

Ձեռագրի միակ մանրանկարը ներկայացնում է Թովմա Մեծոփեցուն՝ Պողոս առաքյալի առջև։ Ձեռագրում չկա Մինասի ստորագրությունը, սակայն մանրանկարի հորինվածքը և ոճը կասկած չեն թողնում այս գործի հեղինակության վերաբերյալ։

4. 1437 թ., Շարակնոց, Արգելան, գրիչ՝ Գրիգոր Աթաբեկենց, ստացող՝ Գրիգոր կրոնավոր, Երուսաղեմ 2479։ Թերթ՝ 694, թուղթ, չափ՝ 11,5×8,5, գրություն՝ միասյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ։

Նկարիչը զարդարել է ձեռագիրը հետևյալ մանրանկարներով՝ Հովակիմ և Աննա (էջ 4ա), Խաչելություն (էջ 254ա), Հարություն (էջ 254ա), Համբարձում (էջ 321ա), Հոգեգալուստ (էջ 346ա)։ Ձեռագիրն ունի նկարազարդ անվանաթերթեր, զարդագրեր և լուսանցազարդեր։ Որպես գրքի ծաղկող Մինասը հիշատակված է 252ա էջի լուսանցքի արձանագրության մեջ, իսկ ինքը իր ստորագրությունը թողել է Համբարձման տեսարանի տակ (էջ 321ա)[29]։

5. 1439 թ., Ավետարան, գրիչ՝ Գրիգոր Աթաբեկենց, ստացող՝ Աստվածատուր կրոնավոր, Քյուրտյանի հավաքածու հմր. 65, այժմ գտնվում է Վենետիկի Մխիթարյան Միաբանության մատենադարանում[30]։ Թերթ՝ 376, թուղթ, չափ՝ 18×14, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ)։

Ինչպես նախորդ ձեռագիրը, այս Ավետարանը ևս գրվել է Արգելանում, Գրիգոր Աթաբեկենց գրչի կողմից։ Առաքել Դավրիժեցին օգտագործել է այս ձեռագրի հիշատակարանը իր Պատմության մեջ, Լուսավորչի աջի պատմության կապակցությամբ[31]։ Ձեռագիրը նշում է Հ. Ոսկյանը[32], իսկ նրա հիշատակարանը ընդգրկված է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի Ձեռագրաց ցուցակում[33]։ Գրիգոր Աթաբեկենց գրիչը, իր հիշատակարանում, խնդրում է հիշել իր հոգևոր հայր և ուսուցիչ Մկրտիչ վարդապետին, որը սովորեցրել է իրեն գրչության արվեստը, ինչպես նաև Մինաս կրոնավորին, «որ երփներփն եւ երանդ երանդ գունով զարդարեաց զԱւետարանս»[34]։ Ձեռագիրը պարունակում է 4 ավետարանիչների դիմանկարները, հարուստ է լուսանցազարդերով, ունի զարդարված անվանաթերթեր, պոլիքրոմ խորաններ, զարդագրություններ և գլխատառեր։

6. 1441 թ., Ավետարան, Գեորգա վանք (Քաջբերունի գավառ), գրիչ՝ Թովմա Մեծոփեցի (ռաբունապետ Թովմա Մեծոփեցու աշակերտ), ստացող՝ Գյուլ-

---

29 Ն. Պողարյան. Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 8, Երուսաղեմ, 1977, էջ 146—148։

30 Ձեռագիրը 1958 թ. եղել է Հ. Քյուրտյանի մասնավոր հավաքածուում. տե՛ս Armenian Manuscripts. An Exhibition at the University of Kansas Library, 1955, № 11, էջ 7, 10, նկ. էջ 10։ Հ. Քյուրտյան. Ցուցակ ձեռագրաց «Հ. Քյուրտյան հավաքածու»-ի, «Բազմավեպ», 1988, էջ 337—340։

31 Առաքել Դաւրիժեցի. Պատմութիւն. Վաղարշապատ, 1896, էջ 416։ Դավրիժեցին տեսել է ձեռագիրը Իսպահանում՝ «Գնացաք յ Ասպահան քաղաք եւ մինչ որոնէաք զյիշատակարանս դրոց, գտաք աւետարան մի որոյ յիշատակարանն է այսպես»։

32 Հ. Ոսկյան. Վասպուրականի—Վանի վանքերը. Վիեննա, 1940, էջ 368։ Տե՛ս նաև ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա, էջ 500։

33 Ս. Տեր-Ավետիսյան. Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970, էջ 121—122 (84)։ Ինչպես հայտնում է ծանոթագրության մեջ Ցուցակի հեղինակը, ձեռագրի հիշատակարանում ջնջված է գրչության տարեթվի առաջին տառը։ Ս. Տեր-Ավետիսյանը այն թվագրում է 1539 թվականով, որը ճիշտ չէ։

34 Նույն տեղում, էջ 122։

փաշա մահդասի, Մատ 3892[35]։ Թերթ՝ 319, թուղթ, չափ՝ 21×16, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ), ականակուռ։

Այն պարունակում է Տերունական շարքի 11 մանրանկար, Ավետումից մինչև Հոգեգալուստ, 4 ավետարանիչների դիմանկարները, 10 խորան և լուսանցազարդեր։ 10բ էջի վրա պատկերված է ստացողը (Գյուլփաշա)։ Մինասի ստորագրությունը ձեռագրում կարելի է տեսնել երկու տեղ՝ Հոգեգալուստի պատկերի տակ (էջ 11ա) և Ղուկաս ավետարանչի դիմանկարի շրջանակի վրա (էջ 157ա)՝ «Զ՝Մինաս՝ նկարողս յիշեցեք ի բարին Քրիստոս»։

7. 1443 թ., Մաշտոց, Սուխարա վանք, գրիչ՝ Գնատիոս, ստացող՝ Պապ տանուտեր, Մատ 6450։ Թերթ՝ 241, թուղթ, չափ՝ 21×16, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ)։

Ձեռագիրն ունի 2 ծիսական մանրանկար՝ «Սկիզբն աստիճանաց կղերիկոսաց» (էջ 180բ) և «Օրհնութիւն եկեղեցվոյ հիմնադրման» (էջ 205բ), 3 անվանաթերթ, գլխազարդեր և լուսանցազարդեր։ Այստեղ Մինասը նորից հիշատակվում է որպես դպիր։ 205բ էջի վրա նա թողել է հետևյալ արձանագրությունը՝ «Զծաղկաւղ դպիրս՝ զՄինասս յիշեցեք ի Քրիստոս»։

8. 1445 թ., Ավետարան, Արճեշ, գրիչ՝ Հովհաննես Մանգասարենց, ստացող՝ Հովհաննես քահանա, Փիրղալեմյան 154[36]։

«Մեռելյարոյց» անունը կրող այս Ավետարանը գրվել է Արճեշում, իսկ նկարազարդվել՝ Մեծոփավանքում։ Հովհաննես Մանգասարենց գրիչը Թովմա բաբունապետին և Մկրտիչ վարդապետին (Մինասի ուսուցիչներին) նշելուց հետո ավելացնում է. «Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի գաւառս Քաջբերունեաց, ի յաստուածապահ քաղաքս Արճէշ, ընդ Հովանեաւ սուրբ եկեղեցւոյս, և ծաղկեցաւ ի սուրբ ուխտս Մեծոփայ, [ձեռամբ աստուածապատիւ... և հեզահոգի Մինաս կրօնաւորի]»[37]։ Ավետարանի մանրանկարների մասին ոչինչ հայտնի չէ, այն պատկանում է կորած ձեռագրերի թվին։

9. 1452 թ., Ավետարան, Վան, գրիչ՝ Վարդան երեց, ստացող՝ Հովհաննես տանուտեր, Ղ. Փիրղալեմյան 186[38]։

Այս ձեռագիրը նույնպես չի պահպանվել։ Գրիչ Վարդանը, որ համագործակցել է Մինասին նաև 1461 թ., իր հիշատակարանում թվարկում է բոլոր նրանց, ովքեր մասնակցել են ձեռագրի ստեղծմանը. «(...) Դարձեալ, յիշեցէք ի Քրիստոս զՄինաս ծաղկողն և զՎարդան վարպետ կազմողն...։ Յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր զՅովանէս [տանուտէրն և զկենակիցն] զԱւագուհին, որ ստացաւ զսուրբ Աւետարանս»։ Մանրանկարների մասին տեղեկություններ չկան։

10. 1454 թ., Ավետարան, Լիմ, Արճեշ, գրիչ՝ Հովհաննես Մանգասարենց, ստացող՝ Վարդան կրոնավոր, Մատ 6570։ Թերթ՝ 290, թուղթ, չափ՝ 23,5×16, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ), ականակուռ։

Ձեռագիրն ունի Ավետարանական շարքի 13 մանրանկար, որոնց հերթականությունը խախտված է հետագա վերակազմության ընթացքում, 3 ավետարանչի դիմանկար, խորաններ և լուսանցազարդեր, այդ թվում նաև թեմատիկ։ 11բ էջի վրա պատկերված է ձեռագրի ստացողը՝ Տեր Վարդանը։ Նկարիչը թողել է իր ստորագրությունը Հոգեգալուստի պատկերի տակ (էջ 13ա)՝ «Զ՝Մինաս զեղկելի նկարողս եւ ծնողսն իմ յիշեցէք աղաչեմ ի Քրիստոս»։

11. 1454 թ., Ավետարան, Բազեինց վանք, գրիչ՝ Հովհաննես, ստացողներ՝ Ստեփանոս տանուտեր, Սարգիս կրոնավոր, Մատ 6653։ Թերթ՝ 280, թուղթ,

---

35 Տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. մաս Ա, էջ 521—522. այստեղ ձեռագիրը սխալմամբ նշված է 3802 համարի տակ։

36 Ղ. Փիրղալեմյան. Նոտարք, էջ 147։

37 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա, էջ 586—587։

38 Ղ. Փիրղալեմյան. Նոտարք (186), էջ 168—169։ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. մաս Բ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 24։

չափ՝ 21×16, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ), ականակուռ խաչով։

Ձեռագիրն ընդգրկում է 12 թեմատիկ մանրանկար, որոնց հերթականությունը հետագա վերակազմության պատճառով խախտված է. 4 ավետարանիչների դիմանկարները, խորաններ և լուսանցազարդեր։ Նկարչի ստորագրությունը գտնվում է 11բ էջի վրա, Համբարձման պատկերի տակ։

12. 1454 թ., Սարգիս Շնորհալու Մեկնութիւն Կաթողիկեայց[39], պատառիկներ, Սուխարավանք, Լիմ, գրիչ՝ Իգնատիոս, ստացող՝ Կիրակոս կրոնավոր, Jean Pozzi-ի նախկին հավաքածուից։ Թուղթ, չափ՝ 32×20,5, գրություն՝ միասյուն, գիր՝ բոլորգիր։

Գրիչը ձեռագիրը սկսել է Սուխարավանքում, այնուհետև, սակայն, ստիպված է եղել փախչել Լիմ անապատ։ Հետագայում այն նվիրաբերվել է Վարագավանքին։ Ձեռագիրը հիշատակվում է տարբեր ցուցակներում[40], իսկ պատառիկները բազմիցս վաճառվել են Եվրոպայի աճուրդներում[41]։

Ձեռագրի նկարազարդումներից այսօր հայտնի են 2 մանրանկար և 2 կիսախորան։ Մանրանկարները ներկայացնում են Սարգիս Շնորհալուն, որն իր մեկնությունները ընծայում է մի դեպքում Ս. Հակոբոսին[42], մյուսում՝ Ս. Հուդային։ Երկու պատկերում էլ ներկայացված է պատվիրատուն, իսկ մանրանկարներից մեկը զարդարում է նաև Ջորեքկերպեան աթոռ կոմպոզիցիան։ Ներբագեղ կիսախորաններով ձևավորված են Պետրոս և Հովհաննես առաքյալների Առաջին Թղթի անվանաթերթերը։

13. 1455 թ., Ավետարան, Արճեշ, գրիչ՝ Դավիթ քահանա, ստացող՝ Խաչատուր քահանա, Երուսաղեմ 3815։ Թերթ՝ 622, թուղթ, չափ՝ 22×16, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ, արծաթե խաչերով և գամերով։

Կարելի է ասել, որ այս ձեռագիրը ամենահայտնին է նկարչի ստեղծագործական ժառանգության մեջ։ Ս. Տեր Ներսեսյանը այն համարում է Մինասի լավագույն գործերից մեկը[43]։ Ձեռագրի որոշ մանրանկարներ վերատպված են կատալոգներում և գրքերում[44]։ Այն հարուստ է նկարազարդումներով, ուր ավետարանական տեսարաններից բացի (14) տեղ են գտել հետևյալ սյուժեները՝

---

39 Սարգիս Շնորհալին կամ Մեկնիչը XII դարի խոշոր մատենագիրներից մեկն է։ Մեկնութիւն Կաթողիկեայց-ը (1156 թ.) համարվում է իր լավագույն երկը։ Գ. Զարբհանալյան. Պատմութիւն հայ հին դպրութեան. Վենետիկ, 1932, էջ 643—647։ Մ. Օրմանյան. Ազգապատում, էջ 1391—1392 (954)։

40 Ղ. Փիրղալեմյան. Նոտարք, (198), էջ 174—176։ Հ. Ոսկյան. Վասպուրականի—Վանի վանքերը, էջ 15։ Ա. Սյուրմելյան. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Եվրոպայի մասնավոր հավաքումներու. Փարիզ, 1950, էջ 35—36։

41 Jean Pozzi-ի մահից հետո իր մասնավոր հավաքածուն վաճառվել և վերավաճառվել է տարիների ընթացքում։ Այդ վաճառքների կատալոգներում կարելի է տեսնել մեզ հետաքրքրող ձեռագրի մասեր.—Arts de l'Islam (Hotel Drouot), 28. 4. 1972, n° 133, 134, նկ. 39 էջի վրա, Objets d'Art (Vente ou Palais d'Orsay), 16; 6. 1977, n° 166, 167, վերատպություններով, Arts de l'Islam (Hotel Drouot), 5. 12. 1994, n° 198, Manuscripts of the Christian East, Sam Fogg Rare Books, Catalogue 18, London, 1996, էջ 36, n°22.

42 Այդ կերպարի մոտ (որին Ա. Սյուրմելյանը իր նկարագրության մեջ սխալմամբ անվանում է Պետրոս) դրված արձանագրությունը գրեթե անընթեռնելի է, սակայն մանրամասն ուսումնասիրության դեպքում հնարավոր է կարդալ «Յակոբոս տն եղբայրն»։ Հնարավոր է, որ Սյուրմելյանը այն նույնիսկ չի նկատել։

43 Ն. Պողարյան. Վսեմ Տիար Գալուստ Գյուլբենկյանի թանկագին մեկ նվերը, էջ 228—233, Ս. Տեր Ներսեսյան. Մինաս նկարազ և իր ծաղկած նկարները, էջ 146։

44 Ն. Պողարյան. Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 11, Երուսաղեմ, 1991, էջ 247—254; M. Thierry, P. Donabedian. Les arts Arméniens, նկ. 138, 139, S. Der Nersessian. L'Art arménien. Paris, 1989, էջ 229, նկ. 176.

Քրիստոսի ծննդաբանությունը (էջ 6ա), Զորեքկերպյան աթոռ (էջ 37ա), Եզեկիելի տեսիլքը (էջ 39ա) և պատվիրատուների դիմանկարները Խաչի մոտ (Քրիստոսի երկրորդ Գալուստը էջ 36ա)։ Ձեռագիրն ունի 4 ավետարանիչների դիմանկարներ, խորաններ և շատ հարուստ է թեմատիկ լուսանցազարդերով։ Մինասի ստորագրությունը գտնվում է Մատթեոս ավետարանչի դիմանկարի տակ՝ պատկերի շրջանակի ներքևի մասում, երկաթագիր տառերով. «ԶՄինաս նկարող եւ զծնողս իւրն յիեցէք» (էջ 68ա)։

14. 1456 թ.[45], Ավետարան, Կտուց անապատ, գրիչ՝ Խաչատուր, ստացող՝ Հովհաննես տանուտեր, Փարիզի Ազգային գրադարան թիվ 18[46]։ Թերթ՝ 313, մագաղաթ, չափ՝ 20,5×15, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ)։

Փարիզի Ազգային գրադարանում պահվող այս Ավետարանը արժեքավոր է նկարչի մասին հարուստ տեղեկություններ պարունակող իր հիշատակարանով և նրբագեղ մանրանկարներով։ Ձեռագիրն ունի 13 մանրանկարներից կազմված Ներունական շարք, 4 ավետարանիչների դիմանկարներ, խորաններ և լուսանցազարդեր։

15. 1456 թ., Ավետարան, գրիչ՝ Հովհաննես Մանգասարենց, ստացող՝ Վարդան հերպետ, Մատ 5629։ Թերթ՝ 337, թուղթ, չափ՝ 14,5×11, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ)։

Ձեռագրի ստեղծման վայրը հայտնի չէ։ Հավանաբար, ինչպես Մանկասարենցի գրեթե բոլոր ձեռագրերը (ալդ թվում և Մինասի կողմից նկարազարդված 1445, 1454 և 1469 թթ. Ավետարանները), այն նույնպես գրվել է Արճեշում, իսկ նկարազարդվել՝ Մեծոփավանքում[47]։ Ավետարանը ունի 13 մանրանկար, 3 ավետարանչի դիմանկար, խորաններ և լուսանցազարդեր։ Իր ստորագրությունը Մինասը թողել է 263 էջի վրա, Մատթեոս ավետարանչի պատկերի տակ։

16. 1456 թ., Ավետարան, Բերդաձոր վանք, գրիչ՝ Մարգարե, ստացող՝ Զիեալ, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի թանգարան 446 (56)[48]։ Թերթ՝ 366, թուղթ, չափ՝ 23,7×16,5, գրություն՝ միասյուն, գիր՝ բոլորդիր, կազմ՝ կաշեպատ տախտակ մետաղյա խաչով։

Ձեռագիրն ունի Տերունական շարքի 9 մանրանկար, 4 ավետարանչի դիմանկար, խորաններ և լուսանցազարդեր։ Մինասի ստորագրությունը գտնվում է մանրանկարներից մեկի տակ (էջ 8բ)՝ «ԶՄինաս սոսկ անուն նկարողս յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած զձեզ յիշէ»։

17. 1456 թ., Մաշտոց և գիրք Ձեւնադրության[49], գրիչներ՝ Հովհաննես Մանդասարենց, Մկրտիչ, Միքաել և Հովասափ, ստացող՝ Ազարիա եպիսկոպոս, Քյուրտյանի հավաքածու հմր. 78, այժմ գտնվում է Վենետիկի Մխիթար-

---

45 Որոշ մասնագետներ մեր նկարչին են վերագրում նաև Մատ 4648 Ավետարանը, 1456 թ. գրված Բաղեշում Ստեփանոս քահանայի ձեռքով և նկարազարդած Մինաս քահանայի կողմից։ Ձեռագրի հիշատակարանի և մանրանկարների ոճի ուսումնասիրությունը թույլ է տալիս հաստատել, որ նկարչի անձը միանգամայն տարբեր է։

46 F. Macler, Catalogue des Manuscrits armeniens et georgiens. Paris, 1908, էջ 7—8: F. Macler, Miniatures Armeniennes, Vie du Christ, էջ 20—21, տախտակ XVI—XIX. Մակլերի ալբոմից 2 մանրանկար (Խաչելություն և Թաղում) վերատպված են Արշակ Զոպանյանի Roseraie d'Armenie-ում, հ. 2, Փարիզ 1923, էջ 251, 254։ R. H. Kevorkian, A. Ter-Stépanian. Manuscrits armeniens de la Bibliotheque Nationale de France, էջ 26—30։

47 Ա. Մաթևոսյան. Մեծոփավանքի գրչության կենտրոնը, էջ 113, 195—196։

48 Ս. Տեր Ավետիսյան. Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, էջ 87—88։

49 Տե՛ս Հ. Քյուրտյան. Առաքել Սյունեցիի մեկ անտիպ գանձը, Հայաստանեայց եկեղեցի, Հայ եկեղեցական Հանդես. Նյու Յորք, 1951, էջ 21։ Նույնի՝ Ցուցակ ձեռագրաց «Յ. Քիւրտեան հաւաքածոյ»-ի.—«Բազմավեպ», 1988, էջ 363—366։

յան Միաբանության մատենադարանում։ Թերթ՝ 300, թուղթ, չափ՝ 18×13,5, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ)։

Ձեռագիրն ունի Քահանայի Ձեռնադրությունը (էջ 85բ) և Ազարիա եպիսկոպոսի դիմանկարը (էջ 99բ) ներկայացնող մանրանկարները, ինչպես նաև հարուստ ձևավորված խորաններ (էջ 3ա, 86ա), գլխազարդեր և նրբագեղ լուսանցազարդեր։

18. 1452—1457 թթ., Հայսմավուրք, Լիմ, Սուխարա վանք, Արգելան, գրիչներ՝ Ղազար, Հերպետ քահանա, Հովհաննես, ստացող՝ Ստեփանոս Ղարիպշահ, Մատ 4472։ Թերթ՝ 668, թուղթ, չափ՝ 32×21,5, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ)։

Ընդօրինակված տարբեր վայրերում և տարբեր գրիչների կողմից, այն ստեղծվել է Ստեփանոս Ղարիպշահի պատվերով իր երուսաղեմ կատարած ուխտագնացության համար։ Սրբեր և մարգարեներ պատկերող բազմաթիվ լուսանցազարդ մանրանկարներից բացի, ձեռագիրն ունի 1 թեմատիկ մանրանկար, որը ներկայացնում է Զորեքկերպեան աթոռը (էջ 4բ)։ Նույն էջի վրա պատկերված է պատվիրատուն և գտնվում է Մինասի ստորագրությունը. «Զմինաս նկարող ի տէր յիշեցէք»։

19. 1458 թ., Սաղմոսագիրք-Ազոթագիրք, Խառաբաստա վանք, գրիչ՝ Իգնատիոս, ստացող՝ Զաքարիա վարդապետ, Մատ. 1044[50]։ Թերթ՝ 353, թուղթ, չափ՝ 10,9×7,8, գրություն՝ միասյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ։

Սաղմոսագիրքը պարունակում է Զաքարիա վարդապետի դիմանկարը (էջ 6բ), Հովհաննես Գառնեցի վարդապետի դիմանկարը (էջ 13բ) և հետևյալ մանրանկարները՝ Կարմիր ծովի Անցումը (էջ 35բ), Սովսեսը, Մարիամը և եբրայեցիները (էջ 60բ), Հովնանի պատմությունը (էջ 183ա), Խաչելություն (էջ 207ա), Երեք մանուկները հնոցում (էջ 212ա), Մանասէ թագավորը գբում (էջ 217բ), Հոգեգալուստ (էջ 249)։

20. 1460 թ., Ճաշոց, Արծկե, գրիչ՝ Հովհաննես քահանա, ստացող՝ Ստեփանոս Ղարիպշահ, Մատ 982։ Թերթ՝ 533, թուղթ, չափ՝ 31,4×21,5, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ)։

Այս ձեռագիրը Ստեփանոս Ղարիպշահի երկրորդ պատվերն է։ Ստեփանոսի դիմանկարը տեսնում ենք ձեռագրում 217 էջի վրա Խաչելության պատկերում։ Գրիչը գրում է իր հիշատակարանում. «Եւ արդ, գրեցաւ սա ի քաղաքս Արծկէ, (...) ձեռամբ անարժան և մեղսամած գրչի Յովանէսի, ի թվականիս մերում Ջ. և Թ. (1460) ամի, ի թագաւորութեան Ջհանշայի, (...) ի վշտաշատ ժամանակիս, յորում շարժեալ են ի վերայ քրիստոնէից անհնարին վիշտ և տառապանք յազգաց անաւրինաց՝ հարկապահանջութիւնք, և ես՝ անպիտան դծաւղս Յովանէս, տեսի զփափագ Ստեփանոս մուղդասուն, զոր ունէր հետ սուրբ գրոցս, սկիզբն արարի և շնորհաւքն Քրիստոսի աւարտեցի»[51]։ Ստեփանոս Ղարիպշահը 1465 թ. (Աղթամարի Ստեփանոս կաթողիկոսի աթոռակալության սկզբին) ձեռագիրը նվիրում է Աղթամարի վանքին[52]։ Ձեռագիրն ունի հետևյալ մանրանկարները՝ Քրիստոսի ծննդաբանությունը (էջ 1բ), Ծնունդ (էջ 4բ), Խաչելություն (էջ 217բ), Հարություն (էջ 218բ) և մեկ էջի վրա պատկերված Հոգեգալուստը և Եզեկիելի տեսիլքը (էջ 309ա)։ Ձեռագիրը հարուստ է գլխազարդերով և լուսանցազարդերով[53]։ Մինասի ստորագրությունը գտնվում է Խաչելության պատկերի էջի վրա։

---

50 Ձեռագիրը կազմել է Հ. Հազարյանի (Նյու Յորք) հավաքածուի մասը (հմր. 31)։ Տե՛ս Ա. Սյուրմելյան. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Եվրոպայի մասնավոր հավաքումներու, հմր. 1։

51 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. մաս Բ, էջ 135։

52 Նույն տեղում, էջ 240։

53 Հ. Հակոբյան. Հայկական մանրանկարչություն. Վասպուրական, նկ. 62, 63, 64։

21. 1461 թ., Ավետարան, Վան, գրիչ՝ Վարդան քահանա, ստացող՝ Մկրտիչ քահանա, Նյու Յորքի Pierpont Morgan գրադարան, հմր. 749։ Թերթ՝ 310, թուղթ, չափ՝ 23,6×16, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր։

Ավետարանը գրված է Վարդան քահանայի ձեռքով «...ի քաղաքս, որ կոչի Վան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Վարդան քաջ զօրավարին։ Ի թուականութեանս Հայոց ՋԺ (=1461), ի հայրապետութեանն տեառն Զաքարիայի, որ մին ամ է, որ նստաւ յաթոռ սուրբ Լուսաւորչին ի էջմիածինն...»[54]։ Մանրանկարների հերթականությունը խախտված է հետագա վերակազմության ժամանակ, և որոշ նկարագարդ թերթեր կորցված են։ Ձեռագիրն ունի 12 Տերունական մանրանկար Ավետումից մինչև Հոգեգալուստ, 4 ավետարանիչների դիմանկարներ, ինչպես նաև պատվիրատուների դիմանկարները Խաչի մոտ (Քրիստոսի երկրորդ Գալուստը, էջ 9բ)։ Մինասի ստորագրությունը գտնվում է նույն էջի վրա «Զ Մինաս նկարող յիշեցէք ի բարին Քրիստոս եւ Աստուած զձեզ յիշէ»։ Այս ձեռագիրը բազմիցս հիշատակությունների է արժանացել[55]։

22. 1462 թ., Հայսմավուրք, Կաուց անապատ, գրիչ՝ Խաչատուր, Հովհաննես Ակծկեցի եղբայրներ, ստացողներ՝ Խաչատուր և Ստեփանոս աբեղաներ, Մատ 4883։ Թերթ՝ 615, թուղթ, չափ՝ 32×21, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ)։

Ձեռագրի նկարազարդումը բաղկացած է բազմաթիվ լուսանցազարդ մանրանկարներից, անվանաթերթերից և գլխազարդերից։ Ուշադրավ է ձեռագրի հիշատակարանը, որը պարունակում է պատմական հետաքրքիր տեղեկություններ, և ուր Խաչատուր գրիչը Մինասին նվիրում է գովասանքի խոսքեր։

23. 1462 թ., Ավետարան, Վան, գրիչ՝ Վարդան երեց, ստացող՝ Ստեփանոս տանուտեր, Երուսաղեմ 1799[56]։ Թերթ՝ 608, թուղթ, չափ՝ 25×16, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ)։

Տերունական շարքի 14 մանրանկարներից բացի, նկարիչը պատկերել է նաև Ահեղ Դատաստանը (էջ 23ա) և պատվիրատուին իր որդու հետ Խաչի մոտ (Քրիստոսի երկրորդ Գալուստը, էջ 22ա)։ Ավետարանը ունի 4 ավետարանչի դիմանկար, խորաններ և լուսանցազարդեր։

24. 1464 թ., Ավետարան, Վան, գրիչ՝ Ստեփանոս, ստացող՝ Պողոս մսհդասի, Լալայան 216[57]։ Թերթ՝ 360, թուղթ, չափ՝ 27×19, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ։

Կորած ձեռագրերի թվին պատկանող այս Ավետարանը զարդարված է եղել Տերունական շարքի 14 մանրանկարներով և 4 ավետարանիչների դիմանկարներով։ Իր ստորագրությունը նկարիչը թողել է մանանկարներից մեկի տակ՝ «Զ Մինաս նկարող մեղաւորս յիշման արժանի արարեք եւ Աստուած ոձեզ յիշէ»[58]։

25. 1464 թ., Շարակնոց, Արգելան, գրիչ՝ Ղազար, ստացող՝ Վարդան կրոնավոր, Մատ 3481։ Թերթ՝ 370, թուղթ, չափ՝ 13×8,8, գրություն՝ միասյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ)։

---

54 A. Sanjian. A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, University of California Press, 1976, p. 605.

55 T. Mathews, R. Wieck. Treasures in Heaven. Armenian Illuminated Manuscripts. The Pierpont Morgan Library, New York, 1994, էջ 194, տախտակ 32; 33, նկ. 67; The First Quarter Century of the Pierpont Morgan Library, Catalogue, New York, 1994, p. 37; S. Der Nersessian. Armenian Gospel Illustration as Seen in Manuscripts in American Collections, New Testament Manuscripts Studies, Chicago, 1950; էջ 147։

56 Ն. Պողարյան. Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Յակոբեանց, հ. 6, Երուսաղեմ, 1972, էջ 153—158։

57 Հ. Լալայան. Յուցակ Վասպուրականի հայերեն ձեռագրերի. Թիֆլիս, 1915, էջ 529։

58 Ձեռագրի նկարագարդումներից Լալայանը նշում է միայն Քրիստոսի երկրորդ Գալուստը, ուր Խաչի մոտ ծնկի իջած պատկերված են գրիչը, պատվիրատուն և Թումա դպիրը։ Մինասի ստորագրությունը գտնվում է նույն էջում։

Ձեռագիրը նկարազարդված է գլխազարդերով և լուսանցազարդերով[59]։

26. 1465 թ., Շարակնոց, Սիս, գրիչ՝ Հեթում քահանա, ստացող՝ Սահակ եպիսկոպոս, Հովհաննես կրոնավոր (1456 թ.), Լեյդեն or. 5521[60]։ Թերթ՝ 358, մագաղաթ, չափ՝ 120×85, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ։

Սիսում գրված այս Շարակնոցի հիշատակարանից հայտնի է, որ այն գրված է Հեթում քահանայի կողմից, Սահակ եպիսկոպոսի պատվերով, սակայն գրչության տարեթիվը հայտնի չէ։ Տարիներ անց, այս ձեռագիրը պատկանել է Աղթամարի Զաքարիա Գ կաթողիկոսին, որն այն նվիրել է Սմբատ թագավորին նրա թագադրության առթիվ[61]։ Վերջինս ձեռագիրը վաճառում է Հովհաննես կրոնավորին, որն այն նորից զարդարել է տալիս «ոսկով և արծաթով»։ Գրիչը գրում է. «(...) ի քաղաքս Սիս. ընդ հովանեաւ սբ. Նշանիս. ձեռամբ Հեթմոյ քհնի և ըստացաւղ զսա տր Սահակ եպսն. և յետ սորա անկաւ սա յայլոք և եկեալ հասաւ մինչև ի տր Զաքարիա կթսն ամ հայոց զոր ըստացաւ զսա և ետ եղբաւր որդոյն իւրոյ Սըմբատ թագավորին և նա ծախեաց և ըստացաւ զսա սրբասէր և բարէմիտ և հեզահոգի կրաւնաւորն Յովաննես և մայրն իւր Փաշամէլիքն ի Մ. և ի Ժ. (210) թանգա. ի հալալ և յարդար վաստակոց իւրց և ետուն վերըստին (342) զարդարել զսա ոսկով և արծաթով որպէս և տեսանէք իսկ. ի վաւելումն անձին իւրոյ և յիշատակ հոգոյ իւրոյ և ծընաւղաց իւրոց...»[62]։ 1465-ին ձեռագիրը վերակազմվել է և նկարազարդվել Մինասի կողմից։ Մանրանկարներն այժմ կորած են, սակայն գրչի հիշատակարանում կարդում ենք Մինաս նկարչին նվիրված խոսքերը. «(...) Յիշեցէք ի Քրիստոս և զհրաչակաւոր և զանուանի նրկարողն ըզտէր Մինասն, որ նրկարեաց ըզսուրբ տնաւրինականքս որ կա ի սմա»[63]։

27. 1466 թ., Ավետարան, Արգելան, գրիչ՝ Գրիգոր Աթաբեկենց, ստացող՝ Մինաս, Մատ 9858։ Թերթ՝ 366, թուղթ, չափ՝ 17,8×13.2, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (որոշմադարդ), ականակուռ արծաթյա խաչերով։

Ձեռագրի ստացողը, հենց ինքը՝ Մինաս ծաղկողն է. «Դարձեալ ես՝ Մինաս ծաղկաւոս, ստացող սուրբ Աւետարանիս, երէս ի գետին դնելով աղաչեմ դմանկունսդ սուրբ եկեղեցւոյ՝ որք սպասաւորէք անցեին մարգարիտս կարդալով կամ աւրինաեելով, լաւ սրտով եւ վասն սիրոյն Քրիստոսի պահեղէք զաստուածային գանձս, զի բազում չարչարանաւք եւ աշխատութեամբ լրմնեցաւ»[64]։ Ձեռագրի նկարազարդումից այժմ կարելի է տեսնել միայն ավետարանիչների դիմանկարները, ընդ որում առաջին երեքը, ինչպես նաև անվանաթերթերը, ար-

---

59 Հ. Աճառյան Մինասին համարում է այս ձեռագրի գրիչներից մեկը։ Տե՛ս Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. հ. 3, Երևան, 1946, էջ 342 (28)։

60 F. Macler, Rapport sur une mission scientifique en Belgique, Hollande, Danemark et Suède, Paris, 1924, էջ 144—147։ Հ. Աճառյան. նշվ. աշխ., հ. 3, էջ 342 (29)։

61 Օտար տիրապետության պայմաններում Վասպուրականում որոնվել են նաև պետականություն հաստատելու ուղիներ։ Զաքարիա Գ և Ստեփանոս Դ Տգա (1465—1489) կաթողիկոսները փորձել են վերականգնել Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը։ 1466 թ. Սմբատ Սեֆեդինյանը հռչակվում է Արծրունյաց թագավորների իրավաժառանգ և ոծվում է Վասպուրականի թագավոր։ Վերջինի կարճատև «թագավորությունը» ամփոփվել է հիմնականում Աղթամար կղզով։ Վասպուրականի ձեռագրերի հիշատակարաններում այն երբեմն անվանվում է «թագավորական աթոռ»։ Մեկ տարի անց այդ թագավորությունը վերացվել է։ Վասպուրականի հոգևոր, քաղաքական և տնտեսական ինքնուրույնությունը շարունակել է մարմնավորել Աղթամարի կաթողիկոսությունը։ Տե՛ս Ն. Ակինյան. Գավազանագիրք կաթողիկոսաց Աղթամարա. Վիեննա, 1920, էջ 25։ Ա. Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. հ. 1, Երևան, 1957, էջ 449—451։

62 F. Macler, Rapport sur une mission scientifique.... էջ 145—146.

63 Նույն տեղում, էջ 146։

64 Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. մաս Բ, էջ 445։

ված են այլ նկարչի ձեռքով։ Մինասից պահպանվել են Հովհաննես ավետարանչի պատկերը (էջ 227բ) և լուսանցազարդերը։

28. 1467 թ., Ավետարան, Ոստան, գրիչ՝ Կարապետ քահանա, ստացող՝ Սուլտանշա, Մատ 6390։ Թերթ՝ 278, թուղթ, չափ՝ 25,5×17,5, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ թավշապատ տախտակ։

Ձեռագիրն ունի 15 մանրանկար, 4 ավետարանիչների դիմանկարներ, խորաններ և լուսանցազարդեր։ Ձեռագրի ստացողը՝ Սուլտանշան, պատկերված է Խաչի մոտ (Քրիստոսի երկրորդ գալուստը, էջ 8բ)։ Նույն էջի ստորին լուսանցքում գտնվում է Մինասի ստորագրությունը։

29. 1469 թ., Ավետարան, Արճեշ, գրիչ՝ Հովհաննես Մանգասարենց, ստացող՝ Ամիր Սարգիս, Երուսաղեմ 3427[65]։ Թերթ՝ 258, թուղթ, չափ՝ 22,5×16, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ)։

Ձեռագիրը հիշատակվում է մի քանի հոդվածներում և նրա որոշ զարդապատկերներ տպագրված են[66]։ Ձեռագրի նկարազարդումը կազմում են 4 ավետարանիչների դիմանկարները և լուսանցազարդերը։ Մինասի ստորագրությունը գտնվում է Մատթեոս ավետարանչի դիմանկարի տակ (էջ 1բ)։

30. 1475 թ., Ավետարան, Վան, գրիչ՝ Կարապետ երեց, ստացող՝ Հովսեփ, Մատ 5013։ Թերթ՝ 290, թուղթ, չափ՝ 15×13,5, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ)։

Ավետարանական շարքի 10 պատկերներին այստեղ ավելացել է Իսահակի զոհաբերությունը (էջ 1բ)։ Ձեռագիրն ունի նաև ավետարանիչների դիմանկարներ և լուսանցազարդեր։ Իր ստորագրությունը նկարիչը թողել է Մատթեոս ավետարանչի դիմանկարի տակ (էջ 10բ)։

31. 1477 թ., Ճաշոց, Արճեշ, գրիչ՝ անհայտ, ստացող՝ Հովհաննես եպիսկոպոս, Մատ 6378։ Թերթ՝ 594, թուղթ, չափ՝ 26×18, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ)։

Ձեռագրում բացակայում է գլխավոր հիշատակարանը, որի տվյալների հիման վրա, հետագա ստացող, Գողթնայց եպիսկոպոս Խաչատուրը 1663 թ. թողել է մի ծանոթագրություն, մատյանի գրչության տարեթվի, տեղի, ինչպես նաև ստացողի վերաբերյալ[67]։ Ձեռագիրը հարուստ է նկարազարդումներով։ Այն ունի 15 մանրանկար, որոնց շարքում, ավետարանական տեսարաններից բացի, օգտագործված են հետևյալ թեմաները՝ Քրիստոսի ծննդաբանությունը (էջ 3բ), Հազորդությունը (էջ 163ա) և Եզեկիելի տեսիլքը (էջ 500բ)։ Ձեռագիրը հարուստ է սրբեր և մարգարեներ պատկերող լուսանցազարդ մանրանկարներով։ Այն աչքի է ընկնում անվանաթերթերի ձևավորմամբ, գլխագարդերի և լուսանցազարդերի կատարմամբ։

32. 1482 թ., Ավետարան, Կտուց, գրիչ՝ Խաչատուր աբեղա, ստացող՝ Խոջա Իդիլշի, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի թանգարան 479 (71)[68]։ Թերթ՝ 290, թուղթ, չափ՝ 26,8×17,9, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ։

Ըստ Ս. Տեր-Ավետիսյանի ցուցակի, ձեռագրի մանրանկարները գտնվում են 3բ—11բ էջերի վրա։ Նկարազարդումներից հայտնի է միայն Քրիստոսի երկրորդ գալուստը, ուր խաչի երկու կողմերում պատկերված են պատվիրատու-

---

65 Ն. Պողարյան. Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց. հ. 10. Երուսաղեմ, 1990, էջ 348—350։

66 Ս. Տեր Ներսեսյան. Մինաս նկարող և իր ծաղկած նկարները, Ն. Պողարյան. Վասեմ Տիար Գալուստ Գյուլբենկյանի թանկագին մեկ նվեր։ J. J. Tıkkanen, Tre armeniska miniatvrhandskrifter, նկ. 2. 17. 19, 28, 55. A. Tchobanian. La Roseraie d'Arménie, t. II, Paris, 1923, p. 237.

67 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. մաս Բ, էջ 421։

68 Ս. Տեր-Ավետիսյան. Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, էջ 106—107։

ներր (էջ 11բ)։ Ձեռագիրն ունի 4 ավետարանիչների դիմանկարներ և լուսանցազարդ մանրանկարներ։ Մինասի ստորագրությունը գտնվում է մանրանկարներից մեկի տակ (էջ 3բ)՝ «Զ Մինաս նկարաւղս յիշեցէք ի Քրիստոս եւ ի բերանով Աստուած ողորմի ասացէք»։

33. 1482 թ., Ճառընտիր, Կտուց անապատ, գրիչ և ստացող՝ Հովհաննես քահանա, Մատ 4869։ Թերթ՝ 669, թուղթ. չափ՝ 32×20, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ)։

Ձեռագիրն ունի 2 մանրանկար՝ Ծնունդ (էջ 128բ) և Հարություն (էջ 653բ)։ Երկու մանրանկարներն էլ կրում են Մինասի ստորագրությունը։

34. 1483 թ., Ավետարան, Կտուց, գրիչ և ստացող՝ Հովհաննես քահանա, Մատ 6879։ Թերթ՝ 366, թուղթ, չափ՝ 17,4×12,1, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ։

Ինչպես նախորդ ձեռագրում, գրիչը և ստացողը նույն Հովհաննես քահանան է, Մուրադի և Մարգարիտի որդին։ Իր և ծնողների դիմանկարները պատկերված են մանրանկարներից մեկում (էջ 11ա)։ 17 պատկերից բաղկացած տերունական շարքը բացում է Խաչակի դոհաբերությունը (էջ 3բ)։ Ձեռագիրն ունի 4 ավետարանիչների դիմանկարներ, խորաններ և լուսանցազարդեր։ Այս Ավետարանը Մինասի թվագրված ձեռագրերից վերջինն է։

35. Ավետարան, Ղայսարիա (1303 թ.), գրիչ՝ Կոստանդիլ (1303 թ.), նկարազարդման ժամանակը և վայրը հայտնի չեն, Նոր Ջուղայի Ամենափրկի վանքի թանգարան 26 (36)[69]։ Թերթ՝ 319, թուղթ. չափ՝ 26×17,5, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ)։

Նկարչի ստորագրությունը գտնվում է 14բ էջի վրա, Քրիստոսի երկրորդ Գալուստը պատկերի տակ։ Խաչի կողքին պատկերված են ձեռագրի ստացողները և իրենց դավակները[70]։ Ձեռագիրը պարունակում է ավետարանական շարքի 15 մանրանկար, 4 ավետարանիչների դիմանկարներ, խորաններ և լուսանցազարդեր։

36. Ճաշոցի մաս, գրչության ժամանակը և վայրը հայտնի չեն, գրիչ՝ Թովմա Մեծոփեցի, աշակերտ Թովմա Մեծոփեցու, Մատ 6501։ Թերթ՝ 131, թուղթ, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ ստվարաթուղթ։

Ա. Մաթևոսյանը ապացուցում է, որ ձեռագիրը գրվել է Մեծոփավանքում 1415—1435 թթ.[71]։ Գլխագարդերից և լուսանցազարդերից դատ, այստեղ կա մեկ թեմատիկ մանրանկար՝ Հարություն (էջ 22բ), որի տակ և կարդում ենք Մինասի կարճ հիշատակությունը։

37. Ավետարան, գրչության ժամանակը և վայրը հայտնի չեն, գրիչ՝ Թումա, Մատ 5519։ Թերթ՝ 328, թուղթ, չափ՝ 27×18, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ (դրոշմազարդ) արծաթյա խաչերով։

Այն պարունակում է 16 թեմատիկ մանրանկար, 4 ավետարանիչների դիմանկարներ, խորաններ և լուսանցազարդեր։ 13բ էջի վրա նկարիչը պատկերել է պատվիրատուներին և թողել է իր ստորագրությունը՝ «Զ Մինաս նկարողս ի Տէր յիշեալ եւ Աստուած ողորմի յիշէ»։

38. Ավետարան, գրչության ժամանակը և վայրը հայտնի չեն, գրիչ՝ անհայտ, Քյուրտյանի հավաքածու հմր. 49, այժմ գտնվում է Վենետիկի Մխիթարյան Միաբանության մատենադարանում[72]։ Թերթ՝ 266, թուղթ, չափ՝ 21×18, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ տախտակ արծաթի խաչով։

---

69 Նույն տեղում, էջ 56—57։

70 S. Der Nersessian, A. Mekhitarian. Miniatures armeniennes d'Ispahan, Bruxelles, 1986. p. 109, 193—194.

71 Ա. Մաթևոսյան. Մեծոփավանքի գրչության կենտրոնը, էջ 98։

72 Տե՛ս Ա. Սյուրմելյան. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Եվրոպայի մասնավոր հավաքումներու, հմր. 10, էջ 14—15։ Հ. Քյուրտյան. Ցուցակ ձեռագրաց «Հ. Քյուրտյան հավաքածոյ»-ի, «Բազմավեպ», 1988, էջ 313։

Ձեռագրի հիշատակարանը չի պահպանվել, որի հետևանքով հայտնի չեն ձեռագրի ստեղծման տվյալները։ Տերունական շարքը (հերթականությունը խախտված է հետագա վերանորոգման հետևանքով) բաղկացած է 13 մանրանկարից։ Ձեռագիրն ունի ավետարանիչների պատկերներ և լուսանցագարդեր։ Մինասի ստորագրությունը գտնվում է 1բ էջի վրա, Ավետման պատկերի տակ. «Զ Մինաս ծագկաւդս յիշեցէք ի Քրիստոս»։ Ձեռագրի որոշ մանրանկարներ վերատպված են[73]։

Այսպիսով կարելի է հետևել Մինասի ավելի քան 50 տարի շարունակվող գործունեությանը։ 1432 և 1443 թթ. Մաշտոցներից բացի, ուր նա անվանված է «գպիր», Մինասը միշտ հիշատակվում է որպես «նկարող», «ծաղկող» կամ «նաղաշ», նաև «Տէր Մինաս» կամ «Մինաս կրոնավոր»։ Իր բոլոր ձեռագրերը Մինասը նկարազարդել է Վանա լճի ավազանում՝ մեկը մյուսից ոչ հեռու տեղավորված վանքերում և բաղաքներում, և մեծ համբավ է ձեռք բերել Քաջբերունիքում և հարակից գավառներում։ Մեր հայտնի ձեռագրերի քանակը ինքնին խոսում է այն մասին, թե որքան մեծ է եղել իր արվեստի պահանջարկը, իսկ նկարչի մասին թողած հիշատակագրությունները ներկայացնում են իրեն որպես «քաջ նկարող», «հեղահոգի», «բանիբուն եւ հոգիրնկալ», «եաւթնարփեան չնաւրհաւքն ի լի»։

Դժվարին, իսկ երբեմն էլ դրամատիկ պայմաններում են ստեղծվել ձեռագրերից շատերը։ XIV դարի վերջին և XV դարում Հայաստանը ենթարկվել է գանազան ցեղերի արշավանքներին և ասպատակություններին։ Չնայած քաղաքական փորձությունների, ծանր հարկային քաղաքականության, տնտեսական կյանքի խաթարման, մշակութային կյանքը վանքերում չէր ընդհատվում։ Այստեղ հատակորեն արտացոլվում էր երկրի դժվարին իրավիճակը՝ վանականները երբեմն ստիպված էին թողնել վանքերը և փախչել ավելի ապահով վայր՝ իրենց հետ տանելով անավարտ ձեռագիրը, տառապում էին քաղցից ու ցրտից։ Եվ, այնուամենայնիվ, ստեղծագործական ոգու աշխուժություն էր տիրում Աղթամարի, Արճեշի, Արծկէի, Բերկրիի և Վասպուրականի մյուս գրչության կենտրոններում։

Մինասը Վասպուրականի ամենաարգասավոր մանրանկարիչներից մեկն է։ Սակայն իր գործունեությունը հատկանշական է ոչ միայն դրանով, այլև այն փոփոխություններով, որ նա բերեց իր հետ։ Իր մշակած պատկերագրական համակարգը նոր փուլ հանդիսացավ Վասպուրականի XV—XVI դարերի ձեռագիր մատյանների նկարազարդման գործում։ Լինելով վառ անհատականություն, նա աշակերտներ պատրաստեց և իր գեղարվեստական ոճի հետևորդներ ունեցավ։ Կարապետ Աղթամարցին, Կարապետ Բերկրեցին, Մուրադ Սարկավագը, Կարապետ Բաղիշեցին և ուրիշ վարպետներ, այդ թվում և անհայտ, ընդունեցին և կիրառեցին նրա աշխատանքների պատկերագրությունը և ոճը։

## ХУДОЖЕСТВЕННОЕ НАСЛЕДИЕ МИНИАТЮРИСТА МИНАСА

ЭДДА ВАРДАНЯН

Резюме

В истории Васпураканской миниатюры важным этапом является искусство XV века. Этот период связан с Ванской школой, искусство которой развивалось в монастырях и скриториях, расположенных в бассейне озера Ван. Иллюстрирование рукописей в этих скриториях отличается как от искусства предыдущего периода,

[73] Armenian Manuscripts. An Exhibition at the University of Kansas Library, p. 8, 9; O. Avedissian. Peintres et Sculpteurs Armeniens, p. 95.

так и от произведений современной Хизанской школы. Одним из выдающихся представителей Ванской школы является миниатюрист Минас. Будучи воспитанником Мецопаванка—важного культурного центра, скрипторня и учебного заведения по подготовке писцов, Минас получил специальное образование и считался профессиональным художником, что отражено в памятных записях рукописей и самого автора. В результате специального исследования творчества этого мастера нами выявлено 38 рукописей, проиллюстрированных им в течение 1432—1483 гг. В статье приводится перечень и краткое описание рукописей, находящихся в собраниях Матенадарана, Библиотеки армянского патриархата в Иерусалиме, Парижской национальной библиотеки, коллекции армянских рукописей в Новой Джульфе, а также в частных собраниях А. Кюрдяна и Ж. Поззи.